ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 մարտի 2023 թվականի N 68-Ա

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալի օգնականի 2023 թվականի մարտի 16-ի N Ն/282-2023 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալի օգնական *Հարություն Գալստյանին* 2023 թվականի մարտի 21-ին և 22-ին, երկու օրով գործուղել քաղաք Եղվարդ՝ «Եղվարդի մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն և մարտի 29-ին և 30-ին, երկու օրով գործուղել քաղաք Աբովյան՝ «Աբովյանի Գ. Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող «Սպորտլանդիա» մարզական միջոցառման տարածքային փուլերը կազմակերպելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2023 թվականի մարտի 17
ք. Հրազդան